



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

11 մարտի 2016թ.
ԴԴ-9 Կ-8271/16

ք.Երևան, Գ. Նժդեհի 23
հեռ. +(37410) 44-71-21

«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպություն
/ՀՀ,ք.Վանաձոր, Մյասնիկյան 12/40/

Ձեզ է ուղարկվում թիվ վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի որոշումը՝ 25 թերթից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարություն
(հասցե՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8)

11 մարտի 2016թ.

ք.Երևան

Դռնբաց դատական նիստում, գրավոր ընթացակարգով, քննության առնելով վարչական գործն ըստ դիմումի «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ արդարադատության նախարարություն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

Դատավարական նախապատմությունը

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը դիմում ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության





Գործ թիվ ՎԴ/5357/05/15

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, կազմով.

Դատավորներ

Արման Դիլանյան (նախագահող)

Միքայել Մելքումյան

Գևորգ Սոսյան

Ալեքսանդրա Հարությունյան

Հրաչ Այվազյան

Քարտուղարությամբ՝

Ք.Ալեքսանյանի

Դատավարության մասնակիցներ՝

Դիմող

«Խաղաղության երկխոսություն»

հասարակական կազմակերպություն

(հասցե՝ ՀՀ, ք.Վանաձոր, Մյասնիկյան 12/40)

Պատասխանող՝

ՀՀ պաշտպանության նախարարություն

(հասցե՝ ք.Երևան, Բազրևանդի 5)

Երրորդ անձ՝

ՀՀ արդարադատության նախարարություն

(հասցե՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/8)

11 մարտի 2016թ.

ք.Երևան

Դռնբաց դատական նիստում, գրավոր ընթացակարգով, քննության առնելով վարչական գործն ըստ դիմումի «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ արդարադատության նախարարություն՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Դատավարական նախապատմությունը

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը դիմում ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության



Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 08 հոկտեմբերի 2015թ. որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 08 հունվարի 2015թ. որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարությունը գործով ներգրավվել է որպես երրորդ անձ:

Դատարանի 08 հունվարի 2016թ. որոշմամբ գործով նշանակվել է գրավոր դատաքննություն:

Միևնույն ժամանակ դատարանը մերժել է բանավոր ընթացակարգով սույն գործը քննելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը, քանի որ դատարանի գնահատմամբ, առկա չի եղել գործի հասարակական մեծ հնչեղությունը հիմնավորող որևէ փաստ:

Դատական նիստին ներկայացել են հայցվորի ներկայացուցիչներ Արթուր Սուքիասյանը (վկայական թիվ՝ 1251, լիազորագիր՝ տրված «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախագահ Է. Խաչատրյանի կողմից 20.01.2016թ.), Էդգար Խաչատրյանը (անձնագիր՝ AN0689042, տրված 23.10.2013թ.), Մուշեղ Շուշանյանը (վկայական թիվ՝ 387, լիազորագիր՝ տրված «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախագահ Է. Խաչատրյանի կողմից 25.01.2016թ.) և պատասխանողի ներկայացուցիչ Մանիկ Մանթրոսյանը (վկայական թիվ՝ 516, լիազորագիր՝ տրված ՀՀ պաշտպանության նախարար Ս.Օհանյանի կողմից, 23.05.2015թ.), չի ներկայացել երրորդ անձի ներկայացուցիչը, չնայած պատշաճ ծանուցված է եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջինս պատշաճ կարգով ծանուցված է եղել դատաքննության ժամի և վայրի մասին, դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածով, որոշել է գործը քննել երրորդ անձի բացակայությամբ: 19.02.2016 թվականին դատաքննությունը հայտարարվել է ավարտված և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2016 թվականի մարտի 11-ը:

Դիմողի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.

Դիմողը հայտնել է, որ «Խաղաղության երկխոսություն»-ը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է, որն 2009 թվականից ի վեր գործունեություն է իրականացնում քաղաքացիական ներուժի, մարդու իրավունքների և դեմոկրատական արժեքների հանդեպ հարգանքի ձևավորման, քաղաքացիական խաղաղասիրական նախաձեռնությունների աջակցման և հակամարտություններից տուժած խմբերի շահերի պաշտպանության ուղղությամբ:

«Խաղաղության երկխոսությունն» արդեն չորս տարի է, ինչ աշխատում է հարաբերականորեն խաղաղ պայմաններում գոհված զինձառայողների ծնողների հետ, փաստաբանների և խորհրդատուների ներգրավմամբ պաշտպանում տուժածների ընտանիքների շահերը և իրավունքները դատական աստիճաններում, ինչպես նաև փորձում օգնել նրանց պարզել, թե ինչ պայմաններում և ինչու են իրենց որդիները մահացել Հայրենիքին ծառայելու ընթացքում: Տուժող ընտանիքներից շատերն են դիմել կազմակերպությանն՝ օգնություն հայցելով: Ի պատասխան՝ «Խաղաղության երկխոսությունն» ստեղծեց «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» կայքը (www.safesoldiers.am), որն ստեղծվել է գոհված զինձառայողների ծնողներից տեղեկատվություն ստանալու համար: Ի թիվս այլ գործողությունների, կազմակերպությունը իրականացում է զինված ուժերում մահացության դեպքերի մշտադիտարկում, որի արդյունքները պարբերաբար հրապարակվում են աշխարհում կայքում:

Իր «Ապահով զինվոր՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում «Խաղաղության



երկիտություն» ՀԿ-ն 07.11.2014 թվականին գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին՝ խնդրելով տրամադրել 1994-2014 թվականների ընթացքում ՀՀ զինված ուժերում զինծառայողների մահվան հանգեցրած դեպքերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն, մասնավորապես՝ մահացածների անուն-ազգանունները, դեպքի վայրը, ամսաթիվը, զորամասի համարը, զորամասի հրամանատարի անունը, ազգանունն ու կոչումը, տուժողի մահվան պատճառը և համառոտ նկարագրություն դեպքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել, ինչի պատճառով «Խաղաղության երկիտություն» ՀԿ-ն հայցադիմումներ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ 07.11.2014թ-ի գրությամբ հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին (թիվ ՎԴ/0199/05/15 վարչական գործ) և ՀՀ պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին (թիվ ՎԴ/7086/05/14 վարչական գործ):

Թիվ ՎԴ/0199/05/15 վարչական գործով ՀՀ պաշտպանության նախարարությունը դատարանին ներկայացրել է հայցապահանջի դեմ առարկություններ, որտեղ որպես առարկությունների հիմք վկայակոչվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանով, հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի 42-րդ կետը, որը որպես գաղտնագրման ենթակա տեղեկություններ սահմանում է զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության փոփոխությամբ:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերը պետք է ճանաչվեն անվավեր, քանի որ նշված կետերով, որպես գաղտնագրման ենթակա տեղեկություններ, ներառվել են այնպիսի տեղեկություններ, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն գաղտնագրման ենթակա չեն, գաղտնագրումն իրականացվել է գաղտնագրման սկզբունքների խախտմամբ և գաղտնագրված տեղեկությունների տարածման նկատմամբ սահմանափակման կիրառումը խախտում է «Խաղաղության երկիտություն» հասարակական կազմակերպության իրավունքները: Վերոգրյալը հիմնավորվում է հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորումներով.

ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի 42-րդ կետի համաձայն՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկություններ սահմանվել են. «Զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության փոփոխությամբ»:

Նույն ցանկի 43-րդ կետի համաձայն՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկություններ սահմանվել են. «Զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ճանաչողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության



տիճանի»:

ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանն ուժի վեջ է մտել 2015 թվականի օգոստոսի 13-ին: Հրամանի մասին հայցվորն իմացել է 2015 թվականի օգոստոսի 15-ին՝ թիվ ՎՂ/0199/05/15 վարչական գործով հայցապահանջի դեմ ՀՀ պաշտպանության նախարարության առարկությունները ստանալու օրը:

ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերը հակասում են հրամանի համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին, մասնավորապես նշված օրենքի 9-րդ հոդվածին: Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ տեղեկությունները.

1. Ռազմական բնագավառում՝

ա) զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման և անցկացման, գորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստագործի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին.

բ) ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին.

գ) հաստիկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստակալության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին.

ե) ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին:

2. Արտաքին հարաբերությունների բնագավառում՝

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական (առևտրային, վարկային և արժույթային) գործունեության մասին, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության կենսական կարևոր շահերին:

3. Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառում՝

ա) Հայաստանի Հանրապետությունը արտաքին զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության գծով արդյունաբերական կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալների, ինչպես նաև պետական նյութական պահուստների փաստացի չափերի և դրանց տեղաբաշխման մասին, բացառությամբ սույն օրենքի 10 հոդվածի 1-ին մասի «ե» կետում ներկայացված տեղեկությունների.

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով ներքին կառույցների օգտագործման մասին.

գ) պետական պաշտպանական պատվերների ծավալների, ծրագրերի (հանձնարարականների), սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության և մատակարարումների, դրանց առկայության և արտադրական կարողությունների զարգացման այդ նպատակով ձեռնարկությունների ու հիմնարկների միջև տեղեկանքի



համագործակցության կապերի, նշված սպառազինությունները և ռազմական տեխնիկա-
արտադրողների կամ տեխնիկական և գիտական մշակումներ կատարողների մասին.

դ) պաշտպանական կամ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող
աշխատանքների, տեխնիկական լուծումների մասին.

ե) քաղաքացիական պաշտպանության ուժերի ու միջոցների, վարչական կառավարման
օբյեկտների պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության
աստիճանի մասին.

զ) թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, Հայաստանի Հանրապետության
պետական պահուստների ու պաշարների, նրա ֆինանսների և բյուջետային
քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող
ամփոփ ցուցանիշներից) մասին:

4. Հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական
գործունեության բնագավառում՝

ա) հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական
գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների,
ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք
բացահայտում են թվարկված տեղեկությունները.

բ) հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական
գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնաբար համագործակցող կամ
համագործակցած անձանց մասին.

գ) կառավարական և այլ տեսակի հատուկ կապի համակարգի, պետական ծածկագրերի,
դրանց վերլուծության մեթոդների ու միջոցների մասին.

դ) գաղտնի տեղեկատվության պաշտպանության մեթոդների ու միջոցների մասին.

ե) պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության բնագավառում պետական
ծրագրերի ու միջոցների մասին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է պետական և ծառայողական գաղտնիքի
շարքին դասելու ենթակա տեղեկությունների սպառիչ ցանկ՝ նշված նորմով սահմանելով
տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու հստակ սահման:
Մինչդեռ, ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 9-Ն հրամանով հաստատված ցանկի 42-րդ և
43-րդ կետերում նշված գաղտնագրման ենթակա տեղեկությունները օրենքով նախատեսված՝
գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկում ներառված չեն և չեն տեղավորվում
օրենսդիրի կողմից սահմանված սահմանների մեջ:

2012 թվականի մարտի 06-ի թիվ ՄԴՈ-1010 որոշման մեջ ՀՀ սահմանադրական
դատարանը նշել է, որ (...) սահմանված կարգով կազմված պետական գաղտնիք հանդիսացող
տեղեկությունների գերատեսչական մանրամասնված ցանկերն ինքնին չեն կարող հանգեցնել
տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման: Այդ իրավունքի
սահմանափակումները նախատեսված են օրենքով, և օրենսդիրը վիճարկվող նորմերով
նախատեսված լիազորության սահմանամբ ոչ թե իրավունքի սահմանափակումներ
սահմանելու իր բացառիկ լիազորությունը պատվիրակել է գործադիր իշխանության
մարմիններին, այլ իրականացնելով սահմանափակումներ սահմանելու իր սահմանադրական
լիազորությունը՝ այդ մարմիններին լիազորել է իրացնել օրենքով սահմանված
սահմանափակումը.

Տվյալ պարագայում, ՀՀ պաշտպանության նախարարն իր թիվ 9-Ն հրամանով
իրականացրել է այնպիսի տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակում, որն
օրենքով նախատեսված չէ:

Վիճարկվող իրավադրույթների և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ



միջև վերը նշված անհամապատասխանությունն իր հերթին վկայում է գաղտնագրման օրենքների խախտման մասին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկությունները գաղտնագրվում են օրինականության, հիմնավորվածության և ժամանակին կատարելու սկզբունքներին համապատասխան:

Գաղտնագրման օրինականությունը գաղտնագրվող տեղեկությունների համապատասխանության ապահովումն է սույն օրենքի պահանջներին:

Գաղտնագրման հիմնավորվածությունը փորձագիտական գնահատման միջոցով յուրաքանչյուր տեղեկության գաղտնագրման նպատակահարմարության պարզումն է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման շահերից:

Գաղտնագրման ժամանակին կատարումը տեղեկությունների ստացման (մշակման) պահից կամ նախապես դրանց տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառումն է:

Այսպիսով, վկայակոչված անհամապատասխանության արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի վիճարկվող դրույթները չեն համապատասխանում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին և օրենքի հետ անհամապատասխանության պարագայում չեն ապահովում օրենքի դրույթների իրականացում: Սույն դիմումով վիճարկվող դրույթները դուրս են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմաններից, ինչը ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 9-Ն հրամանի վիճարկվող դրույթներն անվավեր ճանաչելու հիմք է:

2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախարարներն ընդունում են հրամաններ, իսկ մարզպետները և Երևանի քաղաքապետը՝ որոշումներ և կարգադրություններ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության նախարարները՝ նորմատիվ հրամաններ, իսկ մարզպետները, Երևանի քաղաքապետը՝ նորմատիվ որոշումներ ընդունում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով ուղղակի նախատեսված դեպքերում և սահմաններում:

Հայաստանի Հանրապետության նախարարներին, մարզպետներին և Երևանի



աղաքապետին օրենքներով և իրավական այլ ակտերով չեն կարող տրվել սույն հոդվածի
մեջ ներկայացված լիազորությունները: Նման լիազորություններ վերապահող նորմերն
անվավեր են:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախարարների
հրամանները, ինչպես նաև մարզպետների և Երևանի քաղաքապետի որոշումներն ու
կարգադրությունները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի
Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին, Հայաստանի
Հանրապետության Ազգային ժողովի որոշումներին, Հայաստանի Հանրապետության
Նախագահի հրամանագրերին և կարգադրություններին, Հայաստանի Հանրապետության
կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներին, Հայաստանի
Հանրապետության միջազգային պայմանագրերին, ինչպես նաև օրենքով ուղղակի
նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում ընդունած Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի, Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության կարգավորող
հանձնաժողովների որոշումներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման
մարմինների ղեկավարների, մարզպետների և Երևանի քաղաքապետի որոշումներն ու
կարգադրությունները չպետք է հակասեն նաև Հայաստանի Հանրապետության նախարարների
հրամաններին:

Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախարարների
հրամաններով, մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումներով ու
կարգադրություններով չեն կարող սահմանվել իրավաբանական և ֆիզիկական անձանց
իրավունքները, ազատություններն ու արտոնությունները սահմանափակող, դրանց
իրականացման կարգը փոփոխող կամ պատասխանատվություն սահմանող կամ
պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ փոփոխող
կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական
կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության
կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ
վատթաքացնող նորմեր:

Սույն մասի պահանջների խախտմամբ ընդունված իրավական ակտերը կամ դրանց
համապատասխան մասերն իրավաբանական ուժ չունեն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ
հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների
պահպանմանը (վարչարարության օրինականության սկզբունք):

Սույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող
նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր
(վարչարարության համաչափության սկզբունք):

Վկայակոչված սկզբունքները նպատակ ունեն կանխել իրավական պետությունում
դրսևորվող հնարավոր կամայականությունները և երաշխավորել անձանց, անձանց խմբերի
իրավունքները և շահերը: Նորմերից հետևում է, որ վարչական մարմնի կողմից իրականացված
վարչարարության արդյունքում նորմատիվ իրավական ակտի ընդունումը պետք է լինի
օրինական, հիմնավորված և արդարացի: Այլ կերպ պետական մարմնի ընդունած նորմատիվ
իրավական ակտը չի կարող համարվել իրավաչափ և գոյություն ունենալ ժողովրդավարական
հասարակարգում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն



արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

(...)

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

2012 թվականի մարտի 06-ի թիվ ՄԴՈ-1010 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:

Հայաստանի իրավապաշտպանների գնահատմամբ՝ 1994 թվականի զինադադարից հետո հայկական զինված ուժերում մահացել է ավելի քան 1500 երիտասարդ, մինչդեռ Ղարաբաղյան պատերազմի ողջ ընթացքում հայկական կողմից զոհվել է մոտ 6000 մարդ: Այդ մահերի պատճառ են հանդիսանում սպանությունները, ինքնասպանությունները, ինքնասպանության հասցնելը և մի շարք այլ հանցագործություններն ու իրավախախտումները, որոնք պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում բանակում գոյություն ունեցող այնպիսի արատավոր երևույթների հետ, ինչպիսիք են կոռուպցիան և ոչ կանոնադրային հարաբերությունները, մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմների բացակայությունը, անպատժելիության մթնոլորտը և այլն:

Չորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի, պատահարների, ինչպես նաև դրանց պատճառների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նկատմամբ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից սահմանափակումների սահմանումը «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի իրավունքները խախտում է նաև այն առումով, որ այդ տեղեկությունների թափանցիկ չլինելու պարագայում կազմակերպությունը զրկված է լինելու իր առջև դրված մի շարք խնդիրների:



լուծման ուղղությամբ աշխատանքներ կատարելու, հետևաբար նաև կազմակերպության առջև հողված նպատակների իրականացմանը հասնելու հնարավորությունից:

ՀՀ զինված ուժերում առկա խնդիրների լուծման գործում մեծ դեր ունի նաև հասարակությունը և հասարակական կազմակերպությունները: Այդ առումով, հայցվորի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման և գործունեության սահմանափակումը բացասաբար է անդրադառնալու բանակում շարունակվող արատավոր երևույթների դեմ պայքարի վրա, իսկ այդ երևույթների դեմ պայքարի թուլացումը նշանակում է հարաբերականորեն խաղաղ պայմաններում նոր զոհերի առկայություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 10-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ ազատորեն արտահայտվելու իրավունքն, ի թիվս այլ իրավունքների, ներառում է նաև տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ նշված ազատությունների իրականացումը ... կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

ՄԻԵԿ 10-րդ հոդվածի բովանդակությունից, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքից հետևում է որպեսզի ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտությունը համարվի իրավաչափ, անհրաժեշտ է փոխկապակցված հետևյալ 3 պայմանների միաժամանակյա առկայությունը՝ (1) միջամտությունը պետք է նախատեսված լինի օրենքով, (2) միջամտությունը պետք է ուղղված լինի ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված շահերից/արժեքներից մեկի կամ մի քանիսի պաշտպանությանը, (3) միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

«Օրենքով նախատեսված լինելու» պահանջն ենթադրում է, որ ցանկացած միջամտություն ազատորեն արտահայտվելու իրավունքին պետք է հիմնված լինի ազգային օրենսդրության վրա, ինչն, իր հերթին, նշանակում է պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված և հրապարակված օրենքի առկայություն:

ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտելու հնարավոր հիմքերի ցանկն ունի սպառիչ բնույթ, հետևաբար՝ ազգային իշխանությունները ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտելիս բացի նախատեսվածներից չեն կարող կիրառել որևէ այլ հիմք: Այս կապակցությամբ հարկ ենք համարում ընդամենը փաստել, որ անորոշ (անհասկանալի) է, թե Վիճարկվող նորմատիվ իրավական ակտի հավելվածը հանդիսացող ցանկի 42-րդ և 43-րդ կետերով սահմանված տեղեկությունների գաղտնագրումը ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված որ շահի/արժեքի պաշտպանությանն է ուղղված:

Որպեսզի ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտությունը համարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», պետք է կիրառվի համապատասխան սկզբունքը, այսինքն՝ անհրաժեշտ է պարզել արդյոք միջամտության նպատակը համապատասխան է որան հասնելու միջոցներին: Տվյալ դեպքում «նպատակը» ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ կետով



...տեսված այն շահերը/արժեքներն են, որոնց պաշտպանության նկատառումով ...ությունը կարող է միջամտել ազատորեն արտահայտվելու իրավունքին: Այս պայակցությամբ, որպես սույն վարույթի համար կիրառելի դիրքորոշում, ցանկանում ենք վստահակոչել ՄԻԵԴ դիրքորոշումը՝ արտահայտված Társaság A Szabadságjogokért ընդդեմ Հունգարիայի գործով (զանգատ № 37374/05) 2009թ. ապրիլի 14-ին կայացված վճռում.

«26. Դատարանն անշուշտ ընդունում է, որ հանրությունն իրավունք ունի ստանալու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն: ...

27. 10-րդ հոդվածով պաշտպանվող շահերի հաշվառմամբ օրենքը չի թույլատրում կամայական սահմանափակումների օգտագործումը, որոնք կարող են ընդունել անուղղակի գրաքննության ձև, եթե իշխանությունները խոչընդոտներ հարուցեն տեղեկատվություն հավաքելու ճանապարհին: Տեղեկատվության հավաքումը հանդիսանում է, մասնավորապես, լրագրության կարևոր բաղկացուցիչ մասը և մամուլի ազատության անօտարելի, պաշտպանվող տարրը (տե՛ս Դամանն ընդդեմ Շվեյցարիայի (№ 77551/01, § 52, 2006թ. ապրիլի 25-ի վճիռ): Մամուլի գործառույթները ներառում են հանրային քննարկումների համար հարթակների ստեղծում: Այնուամենայնիվ, այդ գործառույթը իրականացվում է ոչ միայն զանգվածային լրատվության միջոցների և արհեստավարժ լրագրողների կողմից: Տվյալ դեպքում, հանրային բանավեճի նախապատրաստությունը իրականացվել է ոչ կառավարական կազմակերպության կողմից: Այսպիսով, Դիմումատուի գործունեության նպատակը կարելի է բնորոշել որպես հանրային բանավեճի կարևոր տարրերից մեկը: Դատարանը բազմիցս ճանաչել է քաղաքացիական հասարակության կարևոր ներդրումը պետական գործերի քննարկման հարցում (տե՛ս, օրինակ, Սթիլը և Սորրիսը ընդդեմ Միացյալ Թագավորության, (№ 68416/01, § 89, ECHR 2005-II): Դիմումատուն կազմակերպություն է, որը գործում է մարդու իրավունքների ոլորտում, ներառյալ տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանությունը: Այս կազմակերպությունը, ինչպես և մամուլը, կարող է դիտարկվել որպես «հանրային վերահսկիչ» (տե՛ս՝ Ռիոլոն ընդդեմ Իտալիայի, № 42211/07, § 63, 2008թ. հուլիսի 17-ի վճիռ; "Vides aizsardzības Klubs" ընդդեմ Լատվիայի, № 57829/00, § 42, 2004թ. մայիսի 27-ի վճիռ): Այս հանգամանքների հաշվառմամբ Դատարանը համոզված է, որ դիմումատուի գործունեությունն ենթակա է նույնպիսի պաշտպանության Կոնվենցիայի կողմից, որքան մամուլի գործունեությունը:

28. ... Այսպիսով, Դատարանը հանգում է հետևության, որ դիմումատուն մասնակցել է հանրային կարևորության հարցերով տեղեկատվության հավաքմանը: ... Այսպիսով, Սահմանադրական դատարանի մենաշնորհը տեղեկատվության նկատմամբ իրենից ներկայացնում է գրաքննության եղանակներից մեկը: Բացի այդ, հաշվի առնելով, որ դիմումատուի մտադրությունը կայանում էր նրանում, որ հանրության շրջանում տարածի տեղեկատվությունը ... և դրանով իր ներդրումը բերի թմրանյութերի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ քրեական օրենսդրության հարցերով հանրային բանավեճին, տեղեկատվությունը տարածելու նրա իրավունքը ակնհայտորեն սահմանափակվել է:

...

38. Դատարանը գտնում է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության նկատմամբ մատչելիության կանխմանն ուղղված խոչընդոտները կարող են խրտնեցնել նման հարցերի հետ աշխատանքից նրանց, ովքեր գործում են զանգվածային լրատվության կամ հարակից ոլորտներում: Արդյունքում՝ նրանք ի վիճակի չեն լինի կատարելու իրենց կենսականորեն կարևոր դերը «հանրային վերահսկիչների» կարգավիճակում, իսկ նրանց կարողությունը՝ տրամադրել ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն, կտուժի (տե՛ս՝ Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1996թ. մարտի 27-ի որոշում, Ձեկուցման 1996-II, էջ. 500, § 39).

39. Վերոշարադրյալ նկատառումներից ելնելով՝ Դատարանն եզրակացնում է, որ տվյալ



...ում դիմումատուի ազատորեն արտահայտվելու իրավունքին միջամտությունը չի կարող
...արվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ուստի տեղ է գտել
...վեցնիայի 10-րդ հոդվածի խախտում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական
...տարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու
...անց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ
...հետևյալ գործերը.

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության
կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական
ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու
ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր
իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից)
համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
սույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է
դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ

1) որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ
ոեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով)
խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և
ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի
Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները.

2) իրենց նկատմամբ չկիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա դրույթով) կարող
են խախտվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված իրենց իրավունքները:

Թիվ ՎԴ/0199/05/15 վարչական գործով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից
դատարանին ներկայացված հայցապահանջի դեմ առարկություններում որպես
առարկությունների հիմք վկայակոչվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի
հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների
ընդլայնված գերատեսչական ցանկի 42-րդ կետը, քանի որ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-
ի կողմից հայցվող տեղեկատվությունն անմիջականորեն կապված է նշված կետում նշված
տեղեկությունների հետ: Սակայն, հաշվի առնելով վկայակոչված ցանկի 42-րդ և 43-րդ կետերի
միջև գոյություն ունեցող կապը, հայցվորն իր իրավունքների խախտման իրական
հավանականություն է տեսնում նաև ցանկի 43-րդ կետում նշված տեղեկատվության
սահմանափակման հետ, քանի որ ցանկացած դեպքում գորքերում տեղի ունեցող դեպքերի,
պատահարների և դրանց պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը կարող են
հանդիսանալ գորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի ու պատահարների արդյունքում
ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ծառայողական քննության
նյութերը բացահայտող տեղեկություններ և տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել
այդ հիմնավորմամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝
յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմել դատարան՝ օրենքի խախտմամբ ընդունված,
հրապարակված կամ կիրառվող իրավական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի
գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու
մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանը
վերադասության կարգով կամ այլ կերպ չի բողոքարկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-



հողվածների դրույթները՝ դիմողը խնդրել է անվավեր ճանաչել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերը:

Պատասխանողի դիրքորոշումը.

Պատասխանողը ներկայացրել է դիմումի պատասխան հետևյալի մասին.

«Նաղաղության երկխոսություն» ՀԿ-ը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերում նշված տեղեկությունները գաղտնագրման ենթակա չեն, դրանց գաղտնագրումն իրականացվել է գաղտնագրման սկզբունքների խախտմամբ, դրանք հակասում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին և գաղտնագրված տեղեկությունների նկատմամբ սահմանափակման կիրառումը խախտում է ՀԿ-ի իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ վարչ. դադ. օր-ի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունն առարկում է ներկայացված պահանջի դեմ հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 3-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1996թ. դեկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 1997թ. հունվարի 9-ին:

Նշված օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշված են ռազմական բնագավառում պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է նաև ծառայողական գաղտնիքի հասկացությունը, համաձայն որի՝ ծառայողական գաղտնիքը նույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը սահմանում է, որ հանրապետական գործադիր, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:»:

Նույն օրենքի՝ «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը սահմանում են.

«Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տարածվում են լիազորությամբ օժտված են իրենք.

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:



Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից շարքանյութի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից:

Օրենսդիրը, օրենքի 9-րդ հոդվածով նախատեսելով պետական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկություններն ըստ համապատասխան բնագավառների, 12-րդ հոդվածով տեղեկությունների գաղտնագրման բնագավառում միասնական պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով լիազորում է ՀՀ կառավարությանը մշակել Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը, որում նաև նշվում են տեղեկություններից յուրաքանչյուրը տնօրինելու լիազորությամբ օժտված պետական մարմինները: Օրենքն ամրագրելով այդ ցանկի հրապարակային բնույթը՝ ապահովում է դրա մատչելիությունը և դրան առնչվող անձանց գործողությունների կանխատեսելիությունը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը 1997 թվականի օգոստոսի 19-ին ընդունել է «Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը հաստատելու մասին» թիվ 350 որոշումը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը և տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված գործադիր իշխանության մարմինների ղեկավարներին հանձնարարել սահմանված կարգով մշակել գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը՝ ՀՀ կառավարության 30.12.1997թ. թիվ 626 ԿԳ որոշմամբ հաստատված հրահանգի պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 665 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակման կարգը: Այդ որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ «Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկերի նախագծերը մշակվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան...: Նույն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի համաձայն՝ «ՀՀ կառավարության հաստատած՝ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկին և սույն կարգի 2-րդ կետում նշված պահանջներին համապատասխան՝ պետական գաղտնիքի շարքը դասելու և տնօրինելու լիազորություններով օժտված պետական մարմինների ղեկավարների ցուցումով պետական մարմիններում մշտապես գործող հանձնաժողովների կողմից մշակվում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնք 6-րդ կետի համաձայն՝ կազմվում են ըստ բնագավառների՝ առանձին-առանձին, ընդլայնված ձևով ընգրկելով պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները...: Նշված ցանկերը համաձայնեցվում են ՀՀ ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմնի հետ»:

ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի շարքը դասվող ռազմական բնագավառի տեղեկությունների ցանկը տարբերվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշված ռազմական բնագավառի շարքին դասվող տեղեկություններից. այն պարունակում է ավելի լայն տեղեկությունների շրջանակ և Հայաստանի դիրքորոշումից ելնելով փաստորեն ստացվում է, որ եթե Օրենքի 9-րդ հոդվածում նշված



տեղեկությունները սպառիչ են, ուրեմն պետք է դիտարկել, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները ցանկը հակասում է Օրենքին՝ նախատեսելով ավելի շատ սահմանափակումներ:

Վերոնշյալ իրավական ակտերով պետական մարմիններին պատվիրակված իրավասության շրջանակում մշակված ընդլայնված գերատեսչական ցանկերը ներառում են պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի պահանջներից բխող տեղեկությունները, այսինքն՝ գործադիր իշխանության մարմիններին իրավասություն է վերապահվել, լիբազորվել է ընդլայնելու՝ ընդլայնված ձևով գերատեսչական ցանկերում նախատեսելու պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի պահանջներից բխող տեղեկություններ, այդ թվում՝ նախատեսելու նաև ծառայողական գաղտնիք համարվող տեղեկություններ:

Այլ կերպ ասած՝ գերատեսչական ցանկերը պարզապես մանրամասնում են օրենքով նախատեսված և ՀՀ կառավարության կողմից հաստատված հրապարակային ցանկում նշված ոլորտները՝ միաժամանակ սահմանելով նաև ծառայողական գաղտնիքները:

2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել: Սահմանափակումը Սահմանադրությամբ և օրենքով արդեն ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով: Կան իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից հրաժարվել, նահանջել իր ստանձնած պարտավորություններից, այսինքն՝ սահմանափակել մարդու իրավունքներն ու ազատությունները, որոնք բաժանված են սահմանափակվող և չսահմանափակվող իրավունքների ու ազատությունների: Այսինքն՝ կան իրավունքներ և ազատություններ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որևէ օրենսդրական սահմանափակման ոչ մի դեպքում: Այդպիսիք են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում չթվարկված իրավունքները և ազատությունները:

Մարդու իրավունքներն ու ազատությունները նրա սուբյեկտիվ, այսինքն՝ անհատական իրավունքներն ու ազատություններն են: Անհատական ազատության ցանկացած սահմանադրական սահմանափակում ենթադրում է, որ այն պայմանավորված է պաշտպանության ենթակա հասարակական արժեքների բախման հնարավորությամբ, ուստի նման սահմանափակումը ճանաչվում է իրավունքի կողմից:

ՀՀ Սահմանադրությամբ ուղղակի նշված են սահմանափակման ենթակա իրավունքներն ու ազատությունները՝ մասնավորապես Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված՝ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել և ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածին համապատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով տեղեկությունների մատչելիության սահմանափակմանը, փնտրելու և ստանալու ազատության իրավաչափ սահմանափակումների



ավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ, նախևառաջ, այդ ազատության սահմանափակման իրավական հիմքը պետք է բավարարի մատչելիության և կանխատեսելիության որակները:

ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի հրամանագրով հաստատված ՀՀ ռազմական դոկտրինը ՀՀ ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբ է: ՀՀ ռազմական դոկտրինը սահմանում է նաև ռազմական անվտանգության ռազմաքաղաքական հիմնադրույթները:

Ռազմական անվտանգության սպառնալիքները ՀՀ պաշտպանունակության վրա բացասաբար ազդող գործոնների և գործողությունների համախումբ են և ունեն արտաքին ու ներքին բնույթ: Ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքների շարքին են դասվում ՀՀ հանդեպ ռազմական գերազանցության հասնելու և ԼՂ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի Հանրապետության ձգտումները, Հայաստանի Հանրապետության մասին ապատեղեկատվության տարածումը և այլ միջոցներով Հայաստանի Հանրապետության նկատմամբ տեղեկատվական պատերազմի վարումը և այլն:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը պետության կարևոր գործառնություններից է և ներառում է սպառնալիքների ու վտանգների ժամանակին բացահայտումն ու գնահատումը, դրանց հասունացման կանխատեսումը, կանխումը, կասեցումն ու չեզոքացումը:

Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիքի պարագայում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ այդ հակամարտությունը լուծել Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերից, որպես ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիք, պահանջում է մշտական բարձր մարտական պատրաստականություն և այլ համալիր միջոցառումներ, այդ թվում նաև հարևան պետության կողմից վարվող ապատեղեկատվության ասպարեզում, հետևաբար ՀՀ զինված ուժերն իրենց գլխավոր խնդիրը համարելով Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիությունն ու Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը՝ վերը հիշատակված իրավական ակտերին և հայեցակարգային փաստաթղթերին համապատասխան, ղեկավարվելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված Ցանկի «Ռազմական բնագավառի տեղեկություններ» մասի 3-րդ կետը՝ համաձայն որի պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ են համարվում նաև ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության մասին տեղեկությունները՝ ընդլայնելով դրանում նկատառվող հանգամանքները, ՀՀ ՊՆ 09.07.2015թ. թիվ 9-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 42-րդ կետով նախատեսված. «Զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության փոփոխությամբ» տեղեկությունները, և 43-րդ կետով նախատեսված. «Զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի» գնահատվել են որպես հիշատակված պետական գաղտնիքից բխող ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ:

Զորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց



տոճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները կամ նշվածի առնչությամբ անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները հրապարակային դարձնելու պարագայում այն կարող է օգտագործվել նաև ՀՀ-ի դեմ ուղղված տեղեկատվական գործողությունների ասպարեզում, քանզի հարկ է հաշվի առնել, որ դրանցում ներառվում են նաև մեր զինուժի կողմից իրականացված ռազմավարական հատուկ գործողությունների (օպերացիաների) ընթացքում հնարավոր վնասների և կորուստների մասին տեղեկատվությունը, իսկ նշված տեղեկատվության ամբողջականության հասանելիությունն առիթ կհանդիսանա հակառակորդի համար սեփական զինուժի էֆեկտիվ գնահատման համար՝ ցուցադրելով վերջինիս կողմից իրականացվող գործողությունների թվացյալ հաջողությունը:

2014 թվականի օգոստոսին հայ-ադրբեջանական հակամարտ ուժերի շփման գծում գրանցված սուր լարվածությունից հետո ադրբեջանական պաշտոնական լրահոսում, ինչպես նաև լրատվական կայքերում կտրուկ նվազել են տեղեկությունները բանակում գրանցված միջադեպերի և կորուստների վերաբերյալ:

Այսօր տեղեկատվական քաղաքականությունը հանդիսանում է որպես կարևորագույն միջոց յուրաքանչյուր պետության համար, քանզի հենց դրա օգտագործմամբ կարելի է ձևավորել հասարակական կարծիք կամ առաջացնել խուճապ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում (2007թ. դեկտեմբերի 10, կետ 44, Stoll v. Switzerland) վկայակոչված է վերոհիշյալ բանաձևի գծով զեկուցողի կողմից իրականացված՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունների համեմատական վերլուծությունը, որում մասնավորապես ասված է. «... Ընդհանուր առմամբ առկա է երեք հիմնական մոտեցում. մի դեպքում տրվում է պետական կամ ծառայողական գաղտնիքի հասկացության հակիրճ և ընդհանուր սահմանումը, որը լրացվում է իրավակիրառական պրակտիկայում: Երկրորդ դեպքում սահմանվում է գաղտնագրման ենթակա տեղեկությունների ծավալուն և առավել մանրամասնված ցանկ: Երրորդ մոտեցումը հանդիսանում է նախորդ երկուսի համակցությունը և այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ սահմանվում են այն բնագավառները, որոնց առնչվող տեղեկությունները կարող են գաղտնագրվել-և այնուհետև համապատասխան վարչական կամ գերատեսչական ակտերով առավել ճշգրիտ և կոնկրետ սահմանվում են այն տեղեկությունները, որոնք փաստացիորեն կարող են գաղտնիք համարվել: ... Այս օրենսդրական մոտեցումները թույլ են տալիս գտնել ողջամիտ լուծումներ այն տեղեկությունների տեսակները որոշելու բարդ խնդրում, որոնք պաշտպանելու հարցում պետությունն ունի իրավաչափ շահ՝ միաժամանակ հարգելով տեղեկատվության ազատությունը և իրավական անվտանգության կարիքները:

Սակայն, ցանկացած վարչական ակտ կամ նախարարի հրաման, որը բովանդակություն է հաղորդում ավելի ընդհանուր ձևակերպումներ պարունակող օրենքներին, պետք է առնվազն մատչելի լինեն հանրությանը»:



Վերոգրյալից ելնելով՝ նշվածի վառ վկայությունն է այն, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 06.03.2012թ. թիվ ՄԴՈ-1010 որոշման մեջ նշել է, որ գերատեսչական մանրամասնված ցանկերը ինքնին չեն կարող հանգեցնել տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման՝ նկատառելով նաև հենց դրա ոչ հրապարակային բնույթը, քանի որ մինչև 21.03.2013թ. թիվ ՀՕ-21-Ն օրենքով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում փոփոխություն և լրացումը կատարելը կատարելը, նշված հոդվածի 7-րդ մասը սահմանում էր, որ. «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը: Սակայն կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում, հիշյալ հոդվածը սահմանեց, որ. «Գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերստառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական կամ ծառայողական գաղտնիք...» :

Այսինքն՝ ՀՀ ՊՆ-ն, որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին, հիմք ընդունելով օրենքի պահանջը, հրապարկել է պաշտպանության բնագավառի գերատեսչական ցանկը՝ հասարակության անդամներին իրազեկելով, թե օրենքի պահանջներից բխող, օրենքով սահմանված որ սահմանափակումները՝ տեղեկություններն են հանդիսանում գաղտնի, որոնց վերաբերյալ տեղեկատվության տարածումը հնարավոր է փաստական և իրավական հետևանքներ առաջացնի իրավահարաբերության մասնակիցների համար:

ՀՀ ՊՆ 09.07.2015թ. թիվ 9-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 42-րդ և 43-րդ կետերով նախատեսված տեղեկությունների բովանդակությունից ակնհայտորեն հետևում է, որ դրանք հնարավորինս մատչելի են հանրությանը, չեն հանգեցնում տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման, քանի որ լրատվամիջոցներով և համացանցի միջոցով տարածվում են զինված ուժերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն:

Վերոնշյալ իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ մշակված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», որը հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանով, օրինական է, հիմնավորված, արդարացված, մատչելի է հանրությանը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն հրամանը ներկայացվել է պետական իրավական փորձաքննության և ստացել պետական գրանցում, հրամանի թիվ 1 հավելվածում նշված 42-րդ և 43-րդ կետերը հետապնդում են պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ և խնդիրներ չեն հարուցում տեղեկացված լինելու իրավունքի պաշտպանության բնագավառում՝ հետևաբար հրամանի թիվ 1 հավելված 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու հիմքեր չկան, ուստի պատասխանողը խնդրել է մերժել դիմումը:

Երրորդ անձի դիրքորոշումը.

ՀՀ արդարադատության նախարարությունը դիմումի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել:

Վարչական դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Դատարանը, գործում եղած ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդհանուր են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտպանության



նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ որևէ անհատական իրավական ակտով, բացառությամբ դատական ակտի, կամ որևէ ռեալ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտով (դրա որևէ դրույթով) խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

Օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ «1. Այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը դիմումում նշված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, ապա վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս պարզում է վիճարկվող ակտի համապատասխանությունը նաև դիմումում չնշված այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, եթե դա վերապահված չէ սահմանադրական դատարանի իրավասությանը:

2. Պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունը դիմումում չնշված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին՝ վարչական դատարանը վիճարկվող ակտն անվավեր է ճանաչում նաև այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից:

3. Սույն գլխով նախատեսված գործերով դատական ակտ կայացնելիս վարչական դատարանը պարզում է վիճարկվող ակտի (վիճարկվող դրույթի) իրավաչափությունը, մասնավորապես հաշվի առնելով՝

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ օրենքներով նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները:»:

Վերոգրյալ դրույթներից հետևում է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատարանին օժտելով Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից)



մապատասխանության հարցը լուծելու իրավասությամբ, մինևույն ժամանակ սահմանել է
խնդրահարույց ակտի իրավաչափությունը որոշելու համար պարզման ենթակա անհրաժեշտ
հարցերի շրջանակը:

Սույն գործով դիմողը խնդրել է անվավեր ճանաչել «Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների
ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի
2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերը: Ըստ
դիմողի. «վիճարկվող դրույթները չեն համապատասխանում ավելի բարձր իրավաբանական ուժ
ունեցող նոմատիվ իրավական ակտի՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ
օրենքի 9-րդ հոդվածին և օրենքի հետ անհամապատասխանության պարագայում չեն
ապահովում օրենքի դրույթների իրականացում»:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի
գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու
մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի
հավելված 1-ի՝ «Տեղեկություններ ռազմական ոստիկանության գործունեության, ինչպես նաև
իրավախախտումների և պատահարների վերաբերյալ» վերտառությամբ XVII բաժնի 42-րդ
կետով ՀՀ պաշտպանության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկում
ներառվել են՝ «Ձորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև
դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության
գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և օպերատիվ
իրադրության փոփոխությամբ», իսկ 43-րդ կետով՝ «Ձորքերում տեղի ունեցած արտակարգ
դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ
անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները՝ ըստ
տեղեկատվության գաղտնիության աստիճանի»:

ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի պետական
և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության
մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝
հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների
պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ
դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց
պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով»:

ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի
իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք
ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների
միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով
տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով տեղեկատվության
ազատությունն օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություն փնտրելու և այն
տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է (Օրենքի 3-րդ
հոդված):

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի
ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով
սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ
տեղեկությունը:

Ինչպես հետևում է մեջբերումներից, տեղեկատվություն փնտրելու, ստանալու և այն



բաժնու իրավունքը (այսուհետ նաև՝ տեղեկության ազատություն) դասվում է անձի հիմնական իրավունքների շարքին: Տեղեկատվության ազատությունը սահմանադրական իրավունքների շարքին դասելու նպատակահարմարությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է զարգացման ժողովրդավարական ուղի որդեգրած հասարակություններում պետական մարմինների գործունեության թափանցիկությունն ապահովելու ու դրանով արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնելու նկատառումներով:

Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պայմանավորված հիմքերով: «Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված՝ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել և ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը:» (ՄԴՈ-1010, 5-րդ կետ, 2-րդ պարբերություն)¹:

Նշվածին համահունչ, տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքերն ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ու «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթներով: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, ի թիվս այլնի նաև այն դեպքում, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն տեղեկությունների գաղտնագրումը պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների և այդպիսի տեղեկակիրների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառումն է:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ տեղեկությունները.

1. Ռազմական բնագավառում՝

ա) զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման և անցկացման, զորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստազորի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին.

բ) ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին.

գ) հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին.

¹ Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1010 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն ու վերլուծություններն առնչվում են 2005թ. խմբագրությամբ սահմանադրությանը, այդուհանդերձ, դատարանի գնահատմամբ, դրանք արդիական ու կիրառելի են նաև գործող սահմանադրության համապատասխան դրույթների մեկնաբանման առնչությամբ:



դ) Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին.

ե) ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին...»:

Ինչպես նշվեց, տեղեկատվության ազատության սահմանափակումներն ինքնանպատակ չեն: Սահմանելով որոշակի տեսակի տեղեկություններ տրամադրելու և, համապատասխանաբար, դրանք ստանալու և տարածելու սահմանափակումներ, օրենսդիրը ելնում է այն իրավաչափ նպատակի ապահովման նկատառումներից, որոնք ուղղված են պետական անվտանգության ապահովմանը: Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ «Պետական գաղտնիքը — Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը...»: Նույն օրենքի՝ «Գաղտնագրման սկզբունքները» վերառությամբ 11-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ գաղտնագրման հիմնավորվածությունը փորձագիտական գնահատման միջոցով յուրաքանչյուր տեղեկության գաղտնագրման նպատակահարմարության պարզումն է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման շահերից:

Վերոգրյալ իրավանդումների համակարգային վերլուծության արդյունքներից ելնելով, դատարանը գտնում է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված տեղեկությունների բովանդակության հետ գերատեսչական մարմինների կողմից կազմվող գաղտնագրման ընդլայնված ցանկերում ներառված տեղեկությունների բովանդակության համադրումը, հավասարապես, նաև դրանց մեկնաբանությունը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավորման նպատակի ապահովման լույսի ներքո: Ըստ այդմ, օրենսդիրը, այդ նպատակի իրացումը գործնականում ապահովելու համար, սահմանել է պետական կամ ծառայողական բնույթի գաղտնագրման ենթակա առանձին տեղեկությունների ընդհանուր սեռային կամ տեսակային հատկանիշները, իսկ համապատասխան ոլորտի գերատեսչական մարմինն օժտել է դրանց բովանդակությունը ճշգրտելու, այդ տեղեկությունները կոնկրետացնելու ու կիրառական դարձնելու՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը կազմելու լիազորությամբ՝ բացառապես արդեն հիշատակված նպատակների ապահովման նկատառումներից ելնելով:

Միննույն ժամանակ, կանխելու համար օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկությունների ոչ համարժեք լայն մեկնաբանումը, օրենսդիրը սահմանել է այն դեպքերը որոնց առկայության պայմաններում տեղեկությունը չի կարող գաղտնագրվել:

Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել



ա) քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները.

բ) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները.

գ) քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները.

դ) այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական և ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական և ճյուղային ծրագրերի իրականացման վրա.

ե) արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում հնարավոր հետևանքները նվազեցնելու ու վերացնելու, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու, մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունները:»:

Այսինքն, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկություններին համարժեք գաղտնագրման ընդլայնված ցանկ կազմելիս նման լիազորությամբ օժտված պետական մարմինը մի կողմից պարտավոր է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության անվտանգության պաշտպանության երաշխավորման նպատակով, իսկ մյուս կողմից նա կաշկանդված է նույն օրենքի 10-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումներով: Դատարանի գնահատմամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով հետապնդվող նպատակի պաշտպանությանն ուղղված 9-րդ հոդվածով նախատեսված գաղտնագրման ենթակա տեղեկությունների և գաղտնագրման ոչ ենթակա նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների միջև գոյություն ունեցող իրավական տիրույթը կանխորոշում է ընդլայնված գերատեսչական ցանկերում ընդգրկվելիք գաղտնագրման ենթակա տեղեկությունների ծավալն ու բովանդակությունը և, ըստ այդմ, այդ տեղեկությունները նշված ցանկերի մեջ ներառելու իրավաչափությունը: Ինչպես նշված է ՀՀ սահմանադրական դատարանի 06.03.2012թ. որոշման մեջ՝ ««Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում տրված՝ պետական գաղտնիքի սահմանումը՝ համադրված օրենքի 9րդ հոդվածով նախատեսված՝ պետական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունների շրջանակի և 10-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների հետ, թույլ է տալիս արձանագրել, որ օրենքը սահմանում է այս կամ այն տեղեկությունը պետական գաղտնիքի շարքին դասելու և, դրա հետևանքով, դրանց մատչելիության, հետևաբար, նաև անձի՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքի սահմանափակման շրջանակները:» (ՄԴՈ-1010, 6-րդ կետ, 5-րդ պարբերություն):

Միևնույն ժամանակ, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունների, գաղտնագրման սկզբունքների, տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց գաղտնագրման հետ կապված իրավահարաբերությունները:

Այսպես, նշված օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի գ) կետի համաձայն հանրապետական գործադիր, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական և



ճառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

Նույն օրենքի 12-րդ կետի 1-7-րդ պարբերությունների համաձայն՝ «Տեղեկությունները պետական և ճառայողական գաղտնիքի շարքին դասելն իրականացվում է ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելիության:

Գաղտնագրման սկզբունքներին համապատասխան՝ տեղեկությունները պետական և ճառայողական գաղտնիքի շարքին դասելու անհրաժեշտության հիմնավորումը դրվում է պետական այլ մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների վրա, որոնք ստացել (մշակել) են այդ տեղեկությունները:

Տեղեկությունները պետական և ճառայողական գաղտնիքի շարքին դասում են պետական այն մարմինները, որոնց պաշտոնատար անձինք օժտված են տեղեկությունները պետական և ճառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով:

Տեղեկությունների գաղտնագրման բնագավառում միասնական պետական ձեռնարկություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով մշակվում է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը, որում նշվում են նաև տեղեկություններից յուրաքանչյուրը տնօրինելու լիազորություններով օժտված պետական մարմինները:

Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ենթակա է հրապարակման:

Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ճառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք:

բ) ճառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից...»:

Նշված նորմերով վերապահված լիազորությունների իրացման շրջանակներում էլ ՀՀ պաշտպանության նախարարը 09.07.2015թ. թիվ 9-Ն հրամանով հաստատել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը, ըստ դրան կից հավելված 1-ի: Նշված հավելվածում, ի թիվս այլ տեղեկությունների ընդգրկված են նաև վիճահարույց՝ 42-րդ և 43-րդ կետերը, որոնցով գաղտնագրվել են, համապատասխանաբար, «Ձորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի՝ պայմանավորված ռազմաքաղաքական և օպերատիվ իրադրության փոփոխությամբ» և «Ձորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների առնչությամբ անցկացված ճառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկությունները՝ ըստ տեղեկատվության գաղտնիության աստիճանի»:

Դատարանի գնահատմամբ գորքերում տեղի ունեցած արտակարգ դեպքերը, պատահարները, ինչպես նաև դրանց պատճառները բացահայտող ամփոփ տեղեկությունները այդ դեպքերի ու պատահարների արդյունքում ի հայտ եկած իրավախախտումների



նչությամբ անցկացված ծառայողական քննության նյութերը բացահայտող տեղեկություններն ընդգրկված չեն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում նշված՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումների մեջ: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով այն բնագավառը (ռազմական), որին առնչվում են 42-րդ և 43-րդ կետերով նշված տեղեկությունները, այդ տեղեկությունների բնույթը, դատարանը գտնում է, որ կոնկրետ ռազմաքաղակական իրադրության պայմաններում դրանք կարող են իրենցից ներկայացնել այնպիսի տեղեկություններ, որոնց բացահայտումն օբյեկտիվ իրականության մեջ սպառնալիք կպարունակի Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Ուստի այդ տեղեկությունների գաղտնագրումն իրավաչափ է, հավասարապես՝ իրավաչափ են նաև այդ տեղեկությունները գաղտնագրման ընդլայնված ցանկում ընդգրկելուն ուղղված պետական լիազոր մարմնի գործողությունները:

Վերոգրյալ ողջ վերլուծությունների արդյունքներով դատարանը գտնում է, որ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության դիմումը՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, անհիմն է և ենթակա է մերժման:

Դատական ծախսեր.

Օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սկստի ունենալով, որ դիմումը ենթակա է մերժման, իսկ պետական տուրքի գումարը նախապես վճարվել է, ուստի դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալ հիմնավորումներից ելնելով, և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 196-199-րդ հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության դիմումն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ արդարադատության նախարարություն՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին մերժել:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2015 թվականի հուլիսի 09-ի թիվ 9-Ն հրամանը



վելված 1-ի 42-րդ և 43-րդ կետերը ճանաչել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»
Հ օրենքին համապատասխանող:
Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական
դատարան հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

ՆԱԽԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
ՀՐԱՉ ԱՅՎԱԾՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
ԱԼԵԿՍԱՆԴՐԱ ՆԱԿԻՅԱՆՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
ՄԻԲԱՅԵԼ ՍԵԼԲՈՒՍՅԱՆ



_____ -ին որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա.ԴԻԼԱՆՅԱՆ